

Ա. Ս. Ղազիյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԱԶՄԻ ԵՎ ԶԻՆՎՈՐԻ ԵՐԳԵՐ

Ռազմական և զինվորական զբաղմունքը եղել է հայ ժողովրդի ազգային կյանքի բնագավառներից մեկը և համապատասխանորեն իր արտացոլումն է գտել ժողովրդի հոգևոր մշակույթի մեջ: Հայ ժողովրդական պոեզիայի մեջ մասնավորապես զգալի տեղ են բռնում ռազմի և զինվորի երգերը, որոնց առաջացումն ու տարածումը կապված է հայ ժողովրդի պատմության որոշ շրջանների հետ: Ռազմի և զինվորի երգերի առաջացումը մեծ մասամբ պայմանավորված է հայկական պետականության մեծ և հայկական կանոնավոր զորքի (բանակի) գոյությունով: Հավանաբար այդպիսի երգեր մենք ունեցել ենք վաղուց ի վեր: Բայց մեզ հասած ամենահին օրինակը պետք է համարել «Ավաղ զլևոնն ասեմ»¹ երգը, որը ունի նաև տարբերակներ, հենքով պատմական է և աղերսվում է Կիլիկիայի Հայկական պետության՝ օտար զավթիչների դեմ մղած ազատագրական կռիվների հետ: Պետք է ենթադրել, որ միջնադարյան Հայաստանում, մասնավորապես Կիլիկյան Հայաստանում զինվորի երգերը սիրված ու տարածված են եղել այն աստիճան, որ մշակվել են ժամանակի բանաստեղծների կողմից (Քլկուրանցի, Տաղ Քաջի Լիպարիտին)², նույնիսկ բերդապահ զինվորների համար գրվել են հատուկ երգեր³: Սակայն 10-րդ դարից հետո մեջ քննարկվելու են հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի այն հատվածը միայն, որոնք առաջացել են 19-րդ դ. վերջին և 20-րդ դարում և մեծ մասամբ պահպանվում են Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվում:

Այն ժամանակից ի վեր, ինչ Հայաստանի արևելյան մասը ազատագրվելով պարսկական լծից միացավ Ռուսաստանին, հայերը ազատված էին ցարական բանակում պարտադիր ծառայություն կատարելուց: Բայց նրանք միշտ էլ կամովին ծառայության էին մտնում ռուսական բանակում, իսկ անցած դարի վերջից՝ 80-ական թվականներից զինվորական ծառայությունը պարտադիր է դառնում նաև հայերի համար: Այդպիսով, հայոց կյանքում երևան է գալիս մի նոր երևույթ՝ զինվոր գնալու: Զինվորական ծառայությունն իր արտացոլումն է գտնում հայ ժողովրդական երգերում: Աստիճանաբար ստեղծվում ու տարածվում են բազմաթիվ երգեր, որոնց թեման զինվորն էր իր ապրումներով, իր անձնական, հասարակական կյանքով ու միջավայրով:

Զինվորի երգերը, սակայն, նորություն էին բերում միայն թեմատիկ առումով: Ժանրային առումով քննարկվող զինվորի երգերը հայ ժողովրդական պոեզիայում նորություն չէին: Դրանք մեծ մասամբ վիպական-քնարական և կամ քնարական երգեր էին (կան և խաղիկներ), ուր հասարակական միջավայրն ու բնությունը ներկայացվում էր բեկված այդ միջավայրի ծնունդ հանդիսա-

1 Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Միջնադարյան հայ ժողովրդական երգեր, Երևան, 1958, էջ 228—232:

2 Հ. Ք կ ու ռ ա ն ց ի, Տաղեր, այնատասիրություն էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 197—204:

3 Գ. Հ ա կ ո թ յ ա ն, ներսև Շնորհալի, Երևան, 1963, էջ 117, 130:

ցող անհատի հոգում, ինչպես և ներկայացվում էր անհատը իր հոգեկան ապրումներով ու սովայտանքներով: Ըստ որում, արտացոլվում էր և այն միջավայրը, որից հեռանում է անհատը՝ ապագա զինվորը, և այն միջավայրը, ուր նա կատարում է իր զինվորական ծառայությունը:

Պարտադիր զինվորական ծառայություն կատարելու մասին օրենքն ընդունվեց դժգոհությամբ: Դրա արձագանքները մենք հանգիստում ենք խնդրառարկա երգերում: Հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվում պահպանվում է մի երգ՝ գրի առնված Կարինե Բարսեղյանից, Երևանում, 1962 թ., որը կրում է «Մակար սրբազան» վերնագիրը: Երգում ժողովուրդը դժգոհում է Մակար սրբազանից: Ըստ երևույթին երգը պատմական հիմք ունի և խոսքը Ամենայն Հայոց կաթողիկոս Մակարի մասին է (կաթողիկոսության տարիներն են՝ 1884—1891), որը ըստ երգի, շնայած իր պատկանելի տարիքին, ազգին տերություն չի կարողանում անել, հայ դպրոցները նրա թողնվածությամբ փակվում են և 20-ամյա տղաներին բանակ են տանում («...սալդաթ ժողվեն քսան յաշուն») և պատկերավոր կերպով զինվորագրությունը համեմատվում է հողմահալած աշնան թողած ազդեցության հետ:

Եվ ոչ միայն այդ, երբ քննում ենք երգերը, ապա կարծես թե պարզ են դառնում նաև բացասական վերաբերմունքի ու դժգոհության պատճառները: Նախ և առաջ աշխատավոր մարդը լինելով էություն միայն խաղաղասեր ու շինարար, չէր ըմբռնում թե ինչու պիտի իր կանաչ-կտրիճ գավակներին ուղարկի կռիվ՝ «...գյուլի առաջ», ում համար և ում դեմ կռվելու, արյուն թափելու: Հայրենասիրության ու քաջության զգացումները խորթ չէին հայ մարդու հոգուն և սրտին, բայց ռուս-ճապոնական, կամ էլ ռուս-դերմանական պատերազմում ում հայրենիքն էր պաշտպանվում, անհասկանալի էր նրան: Եվ պատահական չէ, որ այդ շրջանին ու այդ իրադարձություններին վերաբերող երգերում համարյա թե բացակայում է հայրենասիրական մոտիվը: Դժգոհության մյուս պատճառը տնտեսականն էր: Եվ դա հասկանալի է: Ընտանիքը բանակ էր ուղարկում իր աշխատող անդամին, հաճախ միակ խնամող ու կարող ուժին և այդպիսով զրկվում ապրուստ հայթայթողից:

Հայ ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվում պահպանվում են բավականին երգեր, գրի առնված 30-ական թվականներին (տես Գ. Թարվերդյանի, Ս. Մովսիսյանի ֆոնդերը): Դրանք առաջացել ու տարածված են եղել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և բավական որոշակիորեն արձագանքում են վերոհիշյալ երևույթին: Երբ երգվում է ժողովրդական երգում, թե «Առաջ եկան սև ու սովի օրերը» (Ս. Մովսիսյանի ֆոնդ. «Վարչավու պես քաղաք չկար»), կամ «Նոչեն դեղեն ծուխ չէ մխաց» (նույնի «Փառայեն հրաման եկավ» երգը), ապա ակնարկվում է նախ և առաջ այն, որ դաշտերն ու այգիները անմշակ են մնում, գյուղը զրկվում է աշխատունակ ձեռքերից: Հետաքրքիր է այն, որ զինվորն էլ ընտանիք պահելու հոգսը չի կարողանում հանել իր սրտից նույնիսկ այն ժամանակ, երբ «Գլխրներինս գյուլեն կթափի թոփից»:

Ահա մտանք կռվի տարին

Տունըս շունինք ցորեն գարի,

Մտածելով խելքս մարի..

4 Հայկական ՍՍԻ 9Ա հնադիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորի արխիվ (հետադայում համառոտության համար՝ ԲԱ), Կ. Թղոյանի ֆոնդ, տետր 18, էջ 41-42:

Մի այլ երգ-նամակում ի թիվս այլ պատվերների զինվորը խնդրում է մեծ եղբորը, որ եզները շծախի⁵: Մի այլ երգում⁶ ցավով է ասվում այն մասին, որ օրանը մնաց կալի մեջ և որ.

Աշխատողները կռիվ կացին
Տուն ու խիզան անտեր մացին:

Եվ վերջապես, զինվորագրութունից դժգոհելու մյուս պատճառը բացառապես մարդկային է: Չէ՞ որ բանակ գնացողը բաժանվում էր հայրենիքից, քնտանիքից, սիրած ու մտերիմ մարդկանցից: Ըստ որում ավելի վաղ շրջանի զինվորի երգերում բաժանման ու կարոտի մոտիվը այլ ձևով է արտահայտվում, ուշ շրջանի (առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների շուրջը հյուսված)՝ այլ ձևով: Եվ դա լիովին հասկանալի ու բացատրելի է:

Վաղ շրջանի երգերում⁷, զինվորը, ինչպես և նրա հարազատները գիտեին, որ ժամկետը լրանալուց հետո պետք է հանդիպեն նորից հայրենի գյուղում, այսպես ասած, իրենց մուրազին պիտի հասնեն. հույսը պահում, տոկունացնում էր նրանց:

Անուշ մերիկ, դարդ մի էնե,
Նազլի հարսիդ ազիզ պահե,
Չուրի աստված ինձ ազատե⁸:

Այդպես է հուսադրում զինվորը իր մորը, շնայած նրա համար էլ երեք-չորս տարին շատ ծանր ու դանդաղ է անցնում:

Արև դիպավ Կողբա սարին,
Նամակ գրեմ տամ իմ յարին,
Եր կը թրմի շորսը տարին⁹:

Այսպիսի երգերը, սակայն, փոքրաթիվ են: Ուշ շրջանում, պատերազմի ժամանակ հյուսված երգերը ավելի թախծոտ են, սրտամորմոք: Չէ՞ որ ինչպես պատերազմ գնացողը, այնպես էլ ճանապարհողները գիտակցում են, որ վերադարձի ճանապարհ համարյա թե չկա:

էլ ով պրծնի գյուլի բերնից,
Ով տուն կգա մեկել նորից¹⁰:

Երգվում է հրաժեշտի երգում: Այս կարգի զինվորի երգերը, ուր ներկայացվում է անվերադարձ ու անհույս բաժանումը, հրաժեշտը, ավելի թախծոտ են, քան պանդխտի երգերը, ուր նույնպես նման մոտիվներ կան: Պատճառն այն է,

5 ԲԱ, Գ. Քարվերդյանի ֆոնդ, գ. 3, տ. 32:

6 ԲԱ, Գ. Քարվերդյանի ֆոնդ, գ. 3, տ. 31:

7 ԲԱ, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 2, տ. 65. «Արև դիպավ Կողբա սարին», Ռամկական մրմունջներ, 1904, էջ 198—199. «Նշանելու սալդաթի երգը»:

8 Նույն տեղում:

9 ԲԱ, Ե. Լալայանի ֆոնդ, գործ 2, տ. 65:

10 Գ. Քարվերդյանի ֆոնդ, «Նախալիկից եկավ թուղթը», գործ 3, տ. 31:

որ պանդխտության գնացողի հետ ինչ որ հույսեր, ակնկալություններ են կապում, իսկ զինվոր գնացողի հետ՝ ոչ: Այնպես որ մեծ բանաստեղծի այն տողը, թե «...լաց է այնտեղ ամեն երգ...»¹¹, լիովին բնորոշում են այս երգերը: Այնքան անելանելի ու անհույս է զինվորի վիճակը, որ նա մորը սփոփելու բռնորդ անգամ չի գտնում:

Մի լար մայրիկ, մի լար,
 Լացողը ես եմ,
 Կարմիր գյուլի դեմ
 Կայնողը ես եմ¹²:

Այս մոտիվը, հրաժեշտի այդ ձևը, տարածված էր նաև երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում հյուսված երգերում (օրինակ, տես «Մի լար մայրիկ, մի լար քույրիկ, լացողը ես եմ, գերմանացու դեմ մամա ջան, կրկնողը ես եմ»)¹³:

Զինվորի երգերում շենք տեսնում ուղամի թոհ ու բոհի, զինվորական կյանքի ու ուղամաշունչ տրամադրությունների ներքողում: Երգերի ոգուն խորթ են հարձակվելու, զավթելու, արյուն ու ավեր տարածելու տրամադրությունները: Պատերազմը բերում է արյուն ու կոտորած, մայրերին զրկում զավակներից, այրի թողնում հազարավոր ջահել հարսների, ամայացնում շեն գյուղեր ու դաշտեր:

Երգերը պատերազմը բնորոշում են մերթ որպես մի աշխարհավեր «զուլում», մերթ որպես՝ «...սև ու սովի օրեր», մերթ՝ համայն աշխարհը սասանող մի «որոտում», մի «կրակ»: Հակապատերազմական այս տրամադրությունը կարմիր թելի շես անցնում է զինվորի երգերի միջով (թե մինչև հեղափոխությունը ստեղծված, թե հետագայում): Երգերում արտացոլված մյուս մոտիվները (սիրո, կարոտի, հրաժեշտի) կրում են հակապատերազմական տրամադրությունների կնիք և դրա շնորհիվ նոր գունավորում են ստանում: Մայրական սեր է երգվում, թե հայրենի տան կարոտ, աչքը ճամբին, ձեռքը ծոցում մնացած յարը, թե օրորոցին մնացած նորամանուկ, միևնույն է, բոլոր զգացումներն էլ նախ և առաջ համակված ու ներթափանցված են խաղաղասիրությամբ անհուն ատելությամբ դեպի արյունն ու կոտորածը, պատերազմը և նրա հրահրողները: Այս տեսակետից բնորոշ են հետևյալ տողերը.

Շուտով մտանք Բեռլին քաղաք,
 Ցորեն, գարին նորից կաղանք¹⁴:

Զինվորի երգերում ժողովուրդը իրեն հատուկ իմաստությամբ թափանցում է երևույթների էության մեջ, գնահատում արժանավորին, անարգանքի սյունին գամում մեղավորին: Առանց բացասական մակդիրի չի հիշատակվում գերմանացու անունը (գերմանացի ասելով չպիտի անշուշտ ընդհանրացնել գեր-

11 Վ. Տերյան, Երկեր, հ. 2, 1961, էջ 71:

12 ԲԱ, Բանահյուսական արշավախմբեր, գործ 2, տ. 4 (Ա. Ղանալանյանի 1933 թ. գրառած նյութերից):

13 ԲԱ, Ս. Խանզադյանի ֆոնդ, գործ 1, տ. 3:

14 ԲԱ, Վ. Բղոյանի ֆոնդ, տ. 18, էջ 41:

մտնական ժողովրդին), որովհետև թե առաջին և թե երկրորդ համաշխարհային պատերազմները բորբոքեցին գերմանական իմպերիալիստները: Այս առումով էլ հասկանալի է, թե ինչու երգերում բազմիցս հիշատակվում է գերմանացու անունը: Երգերում ժողովրդի բանաստեղծական գնահատականները բազմապան են ու յուրովի: Շատ տարածված են բանադրանքների ու անեծքների միջոցով պատերազմը հրահրողներին նզովելը.

Գերմանացու գլխին ընկնի մեծ քարը,
Կրակ լցեց, վառեց
Ամբողջ աշխարհը¹⁵,

կամ «Մյե՛վ գերմանեն կրակի գար»¹⁶. «Մեռնի գերմանացու բալեն»¹⁷, «Քաֆր գերմանացուն շկար ըխտիրար»¹⁸ և այլն:

Գարասկզբին և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված երգերի հիմնական մոտիվներից է սոցիալական մոտիվը: Հայտնի է, որ այս շրջանում սոցիալական հակասությունները մեզնում առավելապես սրվել էին, ժողովուրդը որոշակի սոցիալական ինքնագիտակցության էր եկել: Ահա այս երևույթի արձագանքն են բազմաթիվ զինվորի երգեր: Ըստ երգերի, ինչպես ամեն մի ծանր բեռ կյանքում, այնպես էլ զինվորությունը բաժինն է միայն աղքատի, հարուստները և պաշտոնյաները ստեղծված են միայն աշխարհի բարիքները վայելելու համար: Անիծվում է քյասիբ տղայի բախտը. նրա ծնված օրը, ապա գյուղի ջոջերը և նույնիսկ թագավորը:

Թող պարով կործանվի նիկոլի թախտը
էլ եկավ սալդաթ տանելու վախտը¹⁹

կամ

Յարիս խլե, կտանին,
Վիզդ կոտրի, գլավնի²⁰:

Ժողովրդի դժգոհությունը զինվորագրությունից սոցիալական բողոքի գունավորում է ստացել դեռևս ամենավաղ շրջանի երգերում.

Մեր արևը շատ կանաչ է,
Նաչալնիկը մեզ կը կանչե.
Քեասիբ տղին հեշ շի ճանչե²¹:

Հետագայում, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, լայն տարածում է ստանում այդ մոտիվը: Երգերում կա սոցիալական անարդարությունները գիտակցելու, դրանց դեմ բողոքելու մոմենտը, բայց այն ունի հայեցողական բնույթ:

15 ԲԱ, Վ. Բդոյանի ֆոնդ, տ. 18:

16 ԲԱ, Անհատ բանահավաքներ, Ս. Մովսիսյանի ֆոնդ:

17 ԲԱ, Բանահյուսական արշավախմբեր, գ. 2 (Ա. Ղանալանյանի նյութերից)

18 ԲԱ, Վ. Բդոյանի ֆոնդ, տ. 18:

19 ԲԱ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, գործ 2, տ. 14:

20 ԲԱ, Անհ. բանահ. Հ. Տեր-Վարդանյանի ֆոնդ:

21 Ռամկ, մրմ., 1904, էջ 198—199, «նշանլու սալլաթի երգը»:

Ձինվորի երգերում արտացոլվել է նաև զինվորական կյանքի որոշ կողմեր, պատերազմական մոմենտներ: Նոր Նախիջևանի հայության մեջ դեռ դարասկզբին տարածված է եղել մի երգ, որը պատմում է առաջին անգամ հայրենի տնից, ծնողներից բաժանված ու ուսական բանակն ընկած երիտասարդի ողբերգության մասին: Միամիտ, աշխարհ շտեսած 21 տարեկան երիտասարդը ցավով թվում է իր հոգուն ու մարմնին խորթ բուրբ նորամուծութունները, պատմում, թե ինչպես փոխևցին շորերը, կոշիկները, գլխարկը, հագցրին «սալդաթի շինել», «սալդաթի կոշիկ», ինչպես շափեցին լանքերը, բոյբրը²²: Երգի իմաստն այն է, որ ցարական բանակում զինվորը նման է անասունի (տավարի), ուր ուզում են քշում են և այդ բանակը մի այնպիսի բանս է, որից «...չկար մեզի ազատում»²³:

Երգերում շատ սեղմ են ներկայացված պատերազմական գործողությունները: Մի տող, մի շտրիխ, հաճախ էլ նույնիսկ մի մակդիր է ստեղծում պատերազմի, կովի դաշտի ընդհանուր պատկերը: Երբեմն էլ կովի, պատերազմական գործողությունների նկարագիր են հանդիսանում երգի սկզբի տողերը, որոնք որպես նախերգանք են հանդես գալիս: Օրինակ, երգը սկսվում է այսպես՝

Գլխըներիս գյուլեն կթափի թոփից,
Ես նամակ կը գրեմ ձեզի ակոպից²⁴

կամ

Մուժը պատեց մայրիկ, մտանք դիրքերը
Կամանգիրս գողաց՝ առևք զենքերը²⁵:

Երբեմն էլ կովի նկարագիրը միահյուսվում է տեղավայրի և բնության նկարագրի հետ, ավելի սաստկացնում ներքին ողբերգությունը:

Կերչի հողն է քար ու քրոա,
Գյուլեն գըլխիս կը ֆըոֆըոա,
Սրտիս յարան կը մըոմըոա,
Յանա-յանա, դիլխոր բան ա՞ն:

կամ

Սևաստապուլ, շուրջդ մեշա,
Դյուլեն մեջդ կը խշխշա,
Սրտիս վերքը չի լավանա²⁷:

Նախապաշարումների և կենցաղային ու ազգագրական որոշ սովորությունների արձագանքները նույնպես տեղ են գտել երգերում: Օրինակ, մեռնողը պատվիրում է իր գդալը կոտրել ու պարտեզը գցել, իր բաժին ճաշը աղքատին տալ, երազում տեսնում է իրենց տան առաջ մի սև սնդուկ դրած:

22 Ե. Շ ա հ ա դ ի գ, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք, օկզգագրական հանդես, 9, 1902, էջ 79:

23 Նույն տեղում:

24 ՔԱ, Քարվերդյան, դ. 3, տ. 31:

25 ՔԱ, Վ. Բղոյանի ֆոնդ, տ. 18. «Էլի դարդերս»:

26 ՔԱ, Բանահյուսական արշավախմբեր, գ. 2, տ. 5 (Ա. Ղանայանյանի գրառած նյութերից):

27 ՔԱ, Վ. Բղոյանի ֆոնդ, տ. 17:

որից էլ նախագուշակում է իր մահը, կամ պատվիրում է մորը գաթա թխել, որը հետը տանի և այլն:

Առհասարակ Կերչի և Սևաստասյուղի շուրջը հյուսված շատ երգեր հոռետեսական բնույթ ունեն: Պատմական որոշ հիմք ունեցող այդ երգերը հայտնի չափով արտացոլում են պատերազմի սկզբում թշնամու ունեցած գերակշռությունից առաջացած որոշ հուսալքությունը:

Խորհրդային շրջանում ստեղծված ժողովրդական զինվորի երգերին սակայն, հատուկ չեն հոռետեսական տրամադրությունները, դրանք ժամանակավոր բնույթ էին կրում: Իհարկե, մարդկային զգացումները միշտ մնում են որպես այդպիսիք, կարոտ, հրաժեշտ, սեր, բայց ժողովրդի կյանքում խորհրդային տարիներին առաջացել էին նոր երևույթներ, որոնք ժողովրդական երգերում այս կամ այն չափով անդրադարձան: Կարևորը և բնորոշը խորհրդային շրջանի երգերի համար, բոլոր դեպքերում մնում են հայրենասիրությունը, հայրենիքի նկատմամբ ունեցած պարտքի բարձր գիտակցությունը, հավատը դեպի հաղթանակը, ընկերասիրության և եղբայրության գաղափարները: Նույնիսկ այն ժամանակ, երբ որդին ընկնում է ճակատում, մորը մխիթարելու, սփոփելու բառեր են գտնվում:

Մի լար մայրիկ, մի լար քույրիկ,

Քաջ էր Ունանը,

Հայրենիքի հողի համար

Ձոհ էր Ունանը²⁸:

Այսպես է երգվում Խորհրդային Միության հերոս Լ. Ավետիսյանին նվիրված երգում:

Մի այլ երգում («Սև ծովի ափին»)՝²⁹ որդին մորը գրում է, որ շնայած ինքը վիրավորվել է, բայց հրացանը ձեռքից չի գցում և իր ընկերների հետ կռվում է հայրենիքի ազատության համար:

Մի լա մայրիկ, մի լա քույրիկ

Հայրենյաց սիրուն,

Շատերի հետ ես էլ թափում եմ արյուն³⁰:

Հայրենասիրական բարձր տրամադրություններով են տոգորված «Օրհներ ճանապարհս», «Հայրիկս բանակ գնաց», «Դու պինդ մնա» երգերը³¹:

Հավատեսությունամբ, հաղթանակի նկատմամբ հաստատ հավատով է ներծծված «Փախիր պռուս, եկավ ըռուսն» երգը³², ուր ժողովրդին հատուկ հումորով երգվում է այն մասին, թե ինչպես Հիտլերը մտքով Մոսկովն առավ, ինչպես նրա զորքի ձեռքն ու ոտքը դադավ, երբ Կովկաս հասավ, և ինչպես հանկարծակի վրա տվին, բայց ըրսի սվինը տեսնելով, ետ դառան փախան: Ընկերակցվում է գերմանական զինվորների թալանչիական գործողությունները:

28 ԲԱ, Բանահյուսական արշավախմբեր, գ. 2 (Ա. Ղանալանյանի գրի առած նյութերից):

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում:

32 ԲԱ, Վ. Բյուրյանի ֆոնդ, տ. 18:

Երգը մարտական շունչ ունի, բայց ցավոք հայտնի չէ, թե ինչ եղանակով է երգվել:

Այժմ մի քանի խոսք սալդաթի երգերի կառուցվածքային ու գեղարվեստական առանձնահատկությունների մասին:

Դարասկզբին և նույնիսկ մինչև մեր օրերը շատ տարածված ու սիրված է եղել ոազմի ու զինվորի մի երգ «Հասան-Ղալա»: Պահպանվել են այդ երգի մի քանի տարբերակները, որոնցից մեկ հայտնի ամենավաղ օրինակը գտնվում է բանահյուսական սեկտորի արխիվում (Ե. Լալայանի ֆոնդ, գործ 2, տ. 53, գրի է առնված 1915 թ.): Այս երգի թե մոտիվները և թե արտահայտչական միջոցները և թե կառուցվածքը հիմք է հանդիսացել հետագայում հյուսվող բազմաթիվ երգերի համար: Ըստ երևույթին երգի ընդհանուր ոգին հարազատ է եղել ժողովրդին նաև հետագայում, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ պատմական մեծ հատված չի բաժանում «Հասան-Ղալայի» և հետագայում ստեղծված երգերի ժամանակաշրջանները:

Հայրենական պատերազմի տարիներին որոշ երգեր երգվել են «Հասան-Ղալայի» եղանակով, այդ մասին հիշատակություններ կան արխիվում պահպանվող երգերի ծանոթագրություններում: Ըստ որում, «Հասան Ղալա» երգից օգտագործվել են ամբողջական տներ, փոխելով միայն տեղանունը:

Օրինակ.

Հասան-Ղալեն քար ու քոռ,
 Կյուլլեն միջից կը ֆըռֆըռոս³³.
 Կերչի հողն ա քարը ու քոռ
 Կյուլլեն կըլխիս կըֆըռֆըռոս³⁴,

Այս երգը սկզբում ունեցել է որոշակի պատմական հիմք (Հասան-Ղալան ազմական կարևոր նշանակություն ունեցող ամրոց էր էրզրումի մոտ): Այդ հիմքը հետզհետե մթազնվել է:

Հետաքրքիր մի օրինաչափություն գոյություն ունի մեր ոազմի և զինվորի երգերի զարգացման մեջ: Անցյալում, մինչև 18-րդ դարի վերջերը այս թեմայով երգերը կոնկրետ պատմական դեպքերի ու անձնավորությունների շուրջն էին հյուսվում («Ավաղ զլեռնն ասեմ», «Գովեստ գեներալ տեր Ղուկասովին», «Բայբուրթի կոիվը» և այլն), աստիճանաբար երգերը զրկվում են այդ հատկանիշից, առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմի շուրջ հյուսված երգերը պահպանելով հանդերձ պատմական տեղավայրերի, տարեթվերի հիշատակությունը, չեն արտացոլում պատմական կոնկրետ իրողությունների ամբողջական պատկերը:

Սալդաթի երգերում օգտագործված են ժողովրդական պոեզիայի ավանդական բանաստեղծական արտահայտչական միջոցներն ու հնարանքները: Արժանի են հիշատակության կոունկը՝ պանդխտության երգերին այնքան սիրելի բանաստեղծական թռչունը, ծիրանի ծառը: Նմանություն կա, իհարկե, պանդուխտի և զինվորի վիճակների մեջ: Թե առաջինը, թե երկրորդը հայրենի ափերից հեռու են շատ և լուր են ուղարկում կամ էլ ստանում կոունկի միջոցով:

³³ ԱԼ, Ս. Լալայանի ֆոնդ, գ. 2, տ. 53:

³⁴ ԱԼ, Ս. Խանգաղյանի ֆոնդ:

Ջուխտամ կռունկ էկան կազարմի պատին,
նամակ գրի դրի թերուռի տակին³⁵։

Ջինվորի երգերում նույնիսկ օգտագործվում են պանդխտության երգերի առանձին տողեր. օրինակ. «Ղարիբի սիրտը լերդուկ արյուն է»՝ պանդխտության երգում, «Սալդաթի սիրտը գունդ-գունդ արյուն է», կամ էլ «Սալդաթի սիրտը լերդուկ արյուն է» զինվորի երգերում։ Միևնույն հոգեվիճակը, իրադրությունը ենթադրում է նաև արտահայտչական միջոցների նմանությունը։ Սալդաթի երգերում ամենաբազմազան կիրառություն ունեն ժողովրդական երգերին հատուկ կրկնակները, մի տողից, երկու տողից, կամ մի ամբողջ տնից։ Երբեմն կրկնակը երգի տան վերջին տողն է կազմում և կրկնվում է անփոփոխ. «...յանայանա դիխոր բան ա», «...յարալու եմ, դառնալու շեմ», «...խաբեք մորս վիրավոր եմ», ըստ որում այն չի հանգավորվում տան մյուս տողերի հետ։ Երկտողից բաղկացած կրկնակը երբեմն ասվում է երգի ամեն տնից հետո՝ անփոփոխ, կամ իմաստային նոր երանգ ստացած։ Ամբողջ տնից բաղկացած կրկնակը նույնպես երգի ամեն տողից հետո կարող է կրկնվել.

Մայրիկ ջան, մայրիկ,
ինչի բերեցիր
Բալու էրեցիր,
Ասքար ղրկեցիր։
Լավ պահե յարս,
Մինչև իմ գալս³⁶։

Կրկնակը երգին որոշ տրամադրություն է հաղորդում հակադրության կամ էլ նույն իմաստը շեշտելու միջոցով։

Ռազմի և զինվորի երգերը ժողովուրդն անվանում է «սալդաթի երգեր», կամ «սալդաթի խաղեր», շատ հազվադեպ զինվորի կամ ասկյարի։ Կարծես թե ռուսական բանակում գտնվող զինվորի համար ամենախոր և ամենաճիշտ բնորոշում տվողը սալդաթ բառն է, որն ունի ամենալայն օգտագործումը՝ «սալդաթ բալա», «սալդաթ յար», «սալդթցու», «մալադոյ սալդաթ» և այլն։

Ռազմական գործի ու տեխնիկայի շատ տերմիններ բնականաբար օգտագործվում են այնպես, ինչպես ռուսերենում՝ պարախոտ, ակոպ, պլեն, նասիլկա, ֆրոնտ, շրափնել, կամանգիր, աէրոպլան, պոլկ և այլն։

Ռազմի և զինվորի երգերը ծնունդ են որոշակի պատմական միջավայրի, նրանց առաջացումն ու տարածումը ենթադրում է այդպիսի միջավայրը, որի բացակայության դեպքում երգերը մեծ մասամբ մոռացության են մատնվում, ինչպես դա տեղի է ունեցել քննարկվող երգերի հետ։ Սակայն դրանք կարիք ունեն լայն ուսումնասիրության, քանի որ արտացոլում են հայ ժողովրդի կյանքի հետաքրքիր ու յուրահատուկ կողմերը։

35 ԲԱ, Կ. Բարսեղյանի երգերից, 1962 թ. գրանցված։

36 ԲԱ, Ծ. Լալայանի ֆոնդ, գործ 2, տ. 65, «Արև դիպավ Կողբա սարին»։

А. С. Газиян

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ВОЕННЫЕ И СОЛДАТСКИЕ ПЕСНИ**Р е з ю м е**

Армянские народные военные и солдатские песни существуют издавна. В настоящей статье, однако, исследуются песни, возникшие начиная с конца прошлого столетия и до наших дней, которые в народе известны под названием «солдатских» песен.

Основными мотивами этих песен являются душевные переживания солдата и его близких, а также жизненные явления, связанные с набором в солдаты и солдатской жизнью.

Если песни, возникшие до революции, пессимистичны, тоскливы, содержат протест против социальных несправедливостей, осознанных народом стихийно, то песни, созданные после революции и особенно в период Великой Отечественной войны, проникнуты патриотизмом, глубокой ненавистью к войне, интернационализмом и верой в разгром врага.

В статье вкратце рассмотрены также художественные и языковые особенности солдатских песен.